Տ. ԱՐՇԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԽԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ

(14 ապրիլի, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն:

«Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս»
(Մատթ. Իէ. 46)։

Հիսուս Իր երկրավոր կյանքի մեջ առաջին անգամ ցույց է տալիս տկարության նշաններ։ Առաջին անգամ լինելով՝ Հիսուս լքված է՝ պարուրված խոր եւ անփարատելի միայնության զգացումով։ Իր ամբողջ կյանքի ընթացքում՝ ծնունդից ի վեր, Հիսուս հետապնդումների ենթարկվեց, հալածանքների, խարդավանքների եւ ոչ մի անգամ տկարության որեւէ նշան ցույց չտվեց։ Նրա նկատմամբ հալածանքներն սկսվեցին տակավին ծնունդից շատ կարճ ժամանակ անց, երբ Հերովդեսը հրամայեց բնաջնջել այդ օրերին ծնված բոլոր մանուկներին։ Հրապարակային Իր գործունեության ընթացքում Հիսուս Քրիստոսի նկատմամբ հալածանքներն ավելի սաստկացան։ Նրա աճող համբավն ուղղակի հանգստություն չէր տալիս ժամանակի իշխանավորներին՝ հրեա աստիճանավորներին, քահանայապետերին, դպիրներին, փարիսեցիներին եւ այն ամենքին, ովքեր ինչ-որ ձեւով հավակնում էին դիրք եւ հեղինակություն ունենալ հասարակության մեջ։

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, այսօր մենք վերապրում ենք հիշատակները Քրիստոսի կյանքի վերջին իրադարձությունների, վերջին՝ ճակատագրական, վճռորոշ իրադարձությունների, որ մեր եկեղեցական տոնացույցում կոչվում է Մեծ կամ Ավագ շաբաթ։ Ավագ շաբաթվա իրադարձությունները կանխորոշում են ամբողջապես, բնութագրում են Քրիստոսի՝ որպես Աստվածամարդու առաքելությունը մարդկության կյանքում։ Այսօր մենք հիշատակում ենք Քրիստոսի մատնության չարչարանքների օրը։ Վաղը հիշատակելու ենք խաչելությունը, մյուս օրը՝ թաղումը, եւ վերջապես՝ Քրիստոսի հրաշափառ Հարությունը։ Ինչո՞ւ

Քրիստոս, Իր ողջ երկրավոր կյանքի ընթացքում դրսեւորելով համառ, անզիջում ոգի, մարտնչելով չարի դեմ, երբեք ու երբեք չընկրկեց, ցույց չտվեց տկարության ու թուլության որեւէ նշան եւ հանկարծ խաչի վրա մահվանից մի քանի ժամ առաջ համակվեց զգացողությամբ, որ անգամ Աստված, որ Իր Հայրն է, լքել է Նրան: Չէ՞ որ Քրիստոս Ինքն Աստված էր: Չէ՞ որ Ինքը՝ Քրիստոս, ամենազոր էր: Բայց այս պատկերով Աստված մեր առջեւ բացահայտում է մի նոր իրականություն, սքանչելի իրականություն. Հիսուս Իր մարդկային, Իր աստվածային ամենազորության հետ միացրել էր նաեւ մարդկային տկարությունները. ինչպես որ Աստվածությունն ու Մարդկությունն անբացատրելիորեն միավորված էին, նույնպես միավորված էր Հիսուսի մեջ նաեւ աստվածային ամենազորությունը մարդկային տկարությունների հետ: Աստվածային անչարչարելիություն՝ մարդկային չարչարվող բնության հետ: Աստվածային հեռատեսությունը, կանխատեսությունը՝ մարդկային կարճատեսության հետ, եւ հակառակ այն իրողության, որ Հիսուս գիտեր, որ Իր չարչարանքներն ավարտվելու են հարության հաղթանակով, միեւնույնն է, Հիսուսի հոգին լցված էր տագնապներով, պաշարված էր մարդկային վախերով, Նրա մարդկային մարմինն այլեւս հյուծված էր անչափելի եւ անկշռելի տանջանքներից եւ փորձություններից:

Այդ չարչարանքների ամենավճռորոշ փուլը մուտք գործեց Քրիստոս Ավագ շաբաթվա ընթացքում: Նախ Քրիստոսին դավաճանեց Իր մերձավորագույն անձանցից մեկը. Հուդան, որ Հիսուսի տասներկու աշակերտներից մեկն էր, չլսված ու չտեսնված մի երեսպաշտությամբ՝ համբույրով մատնեց Նրան, ուրացավ Նրան: Նրան լքեցին եւ ուրացան Իր աշակերտները: Պետրոսը, որ հավիտենական հավատարմության հավաստիացումներ եւ երդումներ էր տալիս, ամենից սկզբնական փորձության իսկ պահին չզլացավ լքել Իր Տիրոջը, եւ այդ պահին, ինչպես ավետարանիչն է ասում, «Աքաղաղը կանչեց»:

Նրա համախոհները նահանջեցին, հետեւորդները չքացան, մարդիկ, որոնք Քրիստոսի անձի մեջ իրենց մրցակից էին տեսնում, ուղղակի թշնամացան: Իսկ նրանք, ովքեր կոչված էին պաշտպանելու, Քրիստոսի կողքին լինելու, վախից ցրվեցին եւ որեւէ աջակցություն ցույց չտվեցին: Ահա այս խոր միայնության մեջ Քրիստոսին տարան քահանայապետի ատյան, ծաղրեցին, անարգեցին, այնուհետեւ փոխադրեցին կուսակալի ատյան՝ Պիղատոսի առջեւ: Այնտեղ եւս դատապարտության խոսքեր

ունկնդրեց եւ հակառակ Պիղատոսի անվճռականության, չկողմնորոշվածության՝ վերջ ի վերջո դատապարտվեց մահվան՝ առանց դատ ու դատաստանի, առանց շոշափելի եւ առարկայական վկայությունների։ Սա մի զավեշտական, բայց նաեւ ողբերգական բեմադրություն էր, որի ավարտը դարձավ Հիսուսի մահը։

Հիսուսին բարձրացրին խաչ, եւ խաչի վրա ուժերի գերլարումով Հիսուս երկրավոր Իր կյանքում վերջին անգամ դիմեց երկնավոր Իր Հորը. «Աստված Իմ, Աստված Իմ, ինչո՞ւ լքեցիր Ինձ»։ Մարդիկ Աստծու ստեղծագործությունների մեջ ամենից գթասիրտ, բայց նաեւ ամենից դաժան արարածներն են։ Մարդիկ, որոնք կարող են անգամ Աստծու Որդուն՝ մարմնացյալ Աստծուն հասցնել այն վիճակին, որ նույնիսկ Նա կասկածի, կորցնի վստահությունը, թե արդյոք Աստված շարունակո՞ւմ է լինել Իր հետ, սկսի կասկածել, տարակուսել՝ արդյոք Աստված՝ երկնավոր Իր Հայրը, շարունակո՞ւմ է զորակցել Իրեն։ Այսպիսի փորձությունների միջով անցնելուց հետո ավանդեց հոգին։

Այսօր մենք հարց ենք տալիս՝ ինչու Աստված ընտրեց այդ փորձություններով, տառապանքներով լի ճանապարհը՝ մարդկությանն ազատագրելու համար։ Չէ՞ր կարող արդյոք Իր ամենազորությամբ հրահանգեր, եւ լիներ, կարգադրեր, եւ կատարվեր, եւ մարդկությունն արժանանար փրկության։ Ավետարանիչն ինքը վկայաբերում է Քրիստոսի խոսքերը. «Եւ թե ուր եմ գնում, այդ գիտեք, գիտեք նաեւ ճանապարհը» (Հովհ. ԺԴ. 4)։ Աստված չբավարարվեց ընդամենը ցույց տալով ճանապարհը, Աստված անցավ այդ ճանապարհը, Աստված Ինքը կրեց այդ տառապանքները, զրկանքները, փորձությունները՝ մարդկանց շոշափելիորեն ցույց տալով այդ ճանապարհի հասանելիությունը, այդ ճանապարհի մատչելիությունը նրանց համար։ Եւ մարդիկ այսօր ունեն փրկությանը հասնելու ճանապարհը Քրիստոսի պարգեւած շնորհների արդյունքում։

Մենք՝ ամենքս, հատկապես այս օրերին՝ Ավագ շաբաթվա դրամատիկ իրադարձությունների ապրումների մեջ, վերստին անդրադառնում ենք այն մեծ պարտքին, որ մենք ունենք Հիսուսի նկատմամբ։ Նայելով Հիսուսի պատկերին՝ մենք տեսնում ենք մեր պարտքի չափը. մենք Նրան պարտք ենք մի ամբողջ կյանք, մի ամբողջ կյանք, որը կորսված էր առանց Հիսուսի գալստյան, առանց Հիսուսի չարչարանքների, առանց Հիսուսի խաչելության, թաղման եւ հարության։ Բայց ի տարբերություն այլ պարտատերերի՝ Հիսուս չի պահանջում պարտքը վերադարձնել Իրեն։ Նա

պահանջում է, որ այդ պարտքը, որ մենք ունենք Իր նկատմամբ, վերադարձնենք մեր հարազատներին, մեր բարեկամներին, մեր ընկերներին, մեր մերձավորներին։ «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր բարեկամների համար»,— ասում է Հիսուս (Հովհ. ԺԵ. 13)։

Այս է ճանապարհը՝ Հիսուսի պարտքը մարելու, բայց այդ պարտքը մարելով՝ մենք նոր շնորհ եւ պարգեւ ենք ստանում Հիսուսից. մի կյանք, որը չի սպառվում, մի կյանք, որը դառնում է մեր պարգեւը Հիսուսի հարության։ Հիսուսի կյանքի պատմությունն իրապես պիտի դառնար ընդամենը մի հուզիչ ողբերգական պատմություն մարդու մասին, եթե չլիներ հարությունը։ Հարության հույսով Հիսուսի տանջանքների ու տառապանքների պատմությունը դառնում է փրկության պատմություն, եւ այսօր, սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, մենք՝ ամենքս, մասնակից ենք այդ փրկության պատմությանը, ամենքս կարող ենք նաեւ կերտողը լինել այդ փրկության պատմության՝ դառնալով խաչակիցը Քրիստոսի, դառնալով չարչարակիցը Քրիստոսի, եւ դրա շնորհիվ լինելով հարութենակիցը մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի։

Այսօր, թերեւս, շատերս մեր հուսաբեկումների ու հուսախաբությունների մեջ հայացքներս ուղղում ենք երկինք եւ մեր անզորության պատճառով կքած հսկա լեռների տակ դիմում ենք Աստծուն՝ ասելով. «Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ իմ, ինչո՞ւ ես լքել ինձ»։ Լինում են այնպիսի պահեր, երբ թվում է, թե քեզ լքել են ոչ միայն մտերիմները, բարեկամները, ընտանիքի անդամները, այլ նույնիսկ Աստված, եւ այդ պահերին Քրիստոսի շնորհով մենք ունենք պատգամը, որ եթե բոլոր մարդիկ անգամ լքեն ձեզ, միեւնույնն է, Ես ձեզ հետ կլինեմ մինչեւ աշխարհի վախճանը։

Ահա այս վստահությունն եմ մաղթում ամենքիս Ավագ շաբաթվա հիշատակի այս արարողությունների վերապրումներով, որպեսզի Տերը միշտ ներկա լինի մեր կյանքում, երբեք չայցելի մեզ այն զգացումը, որ Աստված երբեւէ լքել է մեզ կամ լքելու է։

Թող Տերը զորացնի մեզ Սուրբ Հոգու շնորհով։

Այժմ եւ հավիտյանս հավիտենից. ամեն։